ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
**Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր**

---

*19.04.2024 թ.*

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**
**ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ**

Հարգարժա՛ն պարոն Սիմոնյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ և «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 65-րդ և 67-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են՝

ա) նախագծերը (հիմնական զեկուցող՝ Ռուստամ Բաքոյան),

բ) նախագծերի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենսգրքերում փոփոխվող հոդվածների մասին տեղեկանքները:

Խնդրում եմ օրենքների նախագծերը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝ ՌՈՒՍՏԱՄ ԲԱՔՈՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՕՐԵՆՔԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** 1998 թվականի մայիսի 5-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (Այսուհետ՝ Օրենսգիրք) 24-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:

***Հոդված 2.*** Օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի «և 3-րդ կետերին» բառերը փոխարինել «մասին» բառերով:

***Հոդված 3.*** Օրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Անչափահասի նկատմամբ հոգաբարձությունն առանց հատուկ որոշման դադարում է նրա տասնութ տարին լրանալիս, ինչպես նաև սույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում:»:

***Հոդված 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*ՆԱԽԱԳԻԾ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Հոդված 1.*** 2004թ. նոյեմբերի 9-ի Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի (Այսուհետ՝ օրենսգիրք) 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը:»:

***Հոդված 2.*** Օրենսգրքի 21-րդ հոդվածի «ա» կետը ուժը կորցրած ճանաչել:

***Հոդված 3.*** Օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, կամ եթե դա են պահանջում անչափահաս ամուսնու շահերը, ինչպես նաև ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին անչափահաս ամուսնու համաձայնության բացակայության դեպքում» բառերը:

***Հոդված 4.*** Օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «ինչպես նաև սահմանված կարգով երեխաների ամուսնանալու, » բառերը:

***Հոդված 5.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Հոդված 24. Քաղաքացու գործունակությունը**

1. Իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից:

2. Տասնվեց տարին լրացած անչափահասը կարող է լրիվ գործունակ ճանաչվել, եթե նա աշխատում է աշխատանքային պայմանագրով կամ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ:

Անչափահասին լրիվ գործունակ ճանաչելը (էմանսիպացիա) կատարվում է խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշման հիման վրա՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի վճռով:

Ծնողները, որդեգրողները և հոգաբարձուն պատասխանատվություն չեն կրում լրիվ գործունակ ճանաչված անչափահասի պարտավորությունների, մասնավորապես նրա կողմից պատճառված վնասի հետևանքով առաջացած պարտավորությունների համար:

**Deleted:** 3. Այն դեպքում, երբ օրենքով թույլատրվում է ամուսնանալ մինչև տասնութ տարեկան դառնալը, քաղաքացին լրիվ ծավալով գործունակություն է ձեռք բերում ամուսնանալու պահից:¶
Ամուսնության հետևանքով ձեռք բերված գործունակությունը լրիվ ծավալով պահպանվում է նաև մինչև տասնութ տարեկան դառնալն ամուսնալուծվելուց հետո:¶
Ամուսնությունն անվավեր ճանաչելիս՝ դատարանը կարող է վճիռ կայացնել դատարանի կողմից որոշված պահից անչափահաս ամուսնու գործունակության լրիվ կորստյան մասին:¶

**Հոդված 30. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասների գործունակությունը**

1. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները կարող են գործարքներ կնքել իրենց օրինական ներկայացուցիչների՝ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի գրավոր համաձայնությամբ, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետում նշված գործարքների:

Այդպիսի անչափահասի կնքած գործարքը վավեր է նաև նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի՝ հետագայում տված գրավոր հավանության դեպքում:

2. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասները, առանց ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնության, իրավունք ունեն՝

1) տնօրինել իրենց աշխատավարձը, կրթաթոշակը և այլ եկամուտները.

2) իրականացնել գիտության, գրականության կամ արվեստի ստեղծագործության, գյուտի կամ մտավոր գործունեության՝ օրենքով պահպանվող այլ արդյունքի հեղինակի իրավունքներ.

3) օրենքին համապատասխան՝ ավանդներ մուծել վարկային հաստատություններ և տնօրինել դրանք.

4) կնքել կենցաղային մանր գործարքներ և սույն օրենսգրքի 29 հոդվածի 2-րդ կետով նախատեսված այլ գործարքներ:

Տասնվեց տարեկան դառնալիս՝ անչափահասներն իրավունք ունեն նաև, կոոպերատիվների մասին օրենքներին համապատասխան, լինել կոոպերատիվի անդամ:

3. Տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասներն ինքնուրույն գույքային պատասխանատվություն են կրում սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերին համապատասխան կնքված իրենց գործարքներով: Այդպիսի անչափահասներն իրենց պատճառած վնասի համար պատասխանատվություն են կրում սույն օրենսգրքին համապատասխան:

4. Ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի միջնորդությամբ դատարանը կարող է բավարար հիմքերի առկայության դեպքում սահմանափակել տասնչորսից մինչև տասնութ տարեկան անչափահասի՝ իր աշխատավարձը, կրթաթոշակը կամ այլ եկամուտներն ինքնուրույն տնօրինելու իրավունքը կամ զրկել նրան այդ իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ անչափահասը լրիվ ծավալով գործունակություն է ձեռք բերել սույն օրենսգրքի 24 հոդվածի 2-րդ կետին համապատասխան:

Deleted: և 3-րդ կետերին

**Հոդված 42. Խնամակալությունը և հոգաբարձությունը դադարելը**

1. Չափահաս քաղաքացիների նկատմամբ խնամակալությունը և հոգաբարձությունը դադարում են խնամակալի, հոգաբարձուի կամ խնամակալության ու հոգաբարձության մարմնի դիմումի հիման վրա՝ խնամարկյալին գործունակ ճանաչելու կամ նրա գործունակության սահմանափակումները վերացնելու մասին դատարանի վճռով:

2. Փոքրահասակ խնամարկյալի տասնչորս տարին լրանալիս նրա նկատմամբ խնամակալությունը դադարում է, իսկ խնամակալի պարտականություններ իրականացնող քաղաքացին, առանց այդ մասին լրացուցիչ որոշման, դառնում է անչափահասի հոգաբարձու:

3. Անչափահասի նկատմամբ հոգաբարձությունն առանց հատուկ որոշման դադարում է նրա տասնութ տարին լրանալիս, ինչպես նաև սույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում:

**Deleted:** ինչպես նաև մինչև չափահաս դառնալը՝ նրա ամուսնության և լրիվ գործունակություն ձեռք բերելու այլ դեպքերում (24 հոդվածի 2-րդ և 3-րդ կետեր):

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Հոդված 10. Ամուսնության կնքման պայմանները**

1. Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը:

Deleted: , բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքերի

2. Արգելվում է ամուսնության կնքումը սույն օրենսգրքի 11-րդ հոդվածով նախատեսված հանգամանքների առկայության դեպքում:

Deleted: Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է:¶

(10-րդ հոդվածը խմբ. 30.04.13 ՀՕ-26-Ն)

**Հոդված 21. Ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձինք**

Ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեն՝

բ) ամուսինը, որի իրավունքները ամուսնության կնքմամբ խախտվել են, եթե ամուսնությունը կատարվել է ամուսիններից մեկի կամավոր համաձայնության բացակայության դեպքում՝ հարկադրանքի, խաբեության, մոլորության կամ ամուսնության պետական գրանցման պահին իր գործողությունները գիտակցելու և դրանք ղեկավարելու անհնարինության արդյունքով.

Deleted: ա) անչափահաս ամուսինը, նրա ծնողները (օրինական ներկայացուցիչները), խնամակալության և հոգաբարձության մարմինը, եթե ամուսնությունը կնքվել է ամուսնական տարիքի չհասած անձի հետ: Անչափահաս ամուսնու տասնութ տարին լրանալուց հետո ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունի միայն այդ ամուսինը.¶

գ) ամուսինը, որը չի իմացել ամուսնության կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքների առկայության մասին, դատարանի կողմից անգործունակ ճանաչված ամուսնու խնամակալը, նախորդ չամուսնալուծված ամուսնության մեջ գտնվող ամուսինը, այլ անձինք, որոնց իրավունքները խախտվել են սույն օրենսգրքի 11-րդ հոդվածի պահանջների խախտումով կատարված ամուսնության կնքմամբ, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմինը.

դ) ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսինը.

ե) ամուսինը, որի իրավունքները խախտվել են սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանգամանքների առկայության պատճառով:

**Հոդված 22. Ամուսնության անվավերությունը բացառող հանգամանքները**

1. Դատարանը կարող է ամուսնությունը վավերական ճանաչել, եթե ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին գործի քննության պահին վերացել են դրա կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքները:

2. Կնոջ հղիության կամ երեխա ծնվելու դեպքում, դատարանը կարող է մերժել ամուսնացող անձի հետ կնքված ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին հայցը:

**Deleted:** , կամ եթե դա են պահանջում անչափահաս ամուսնու շահերը, ինչպես նաև ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին անչափահաս ամուսնու համաձայնության բացակայության դեպքում

3. Դատարանը չի կարող ամուսնությունը ճանաչել կեղծ, եթե նման ամուսնություն գրանցած անձինք մինչև դատարանի կողմից գործի քննությունը, փաստորեն, ընտանիք են կազմել:

4. Ամուսնության դադարումից հետո ամուսնությունը չի կարող անվավեր ճանաչվել, բացառությամբ ամուսինների միջև օրենքով արգելված ազգակցական կապի առկայության կամ ամուսնության պետական գրանցման պահին ամուսիններից մեկի կողմից այլ չլուծված ամուսնության մեջ գտնվելու դեպքերի:

**Հոդված 49. Ծնողների իրավունքների ու պարտականությունների հավասարությունը**

1. Ծնողներն ունեն հավասար իրավունքներ և կրում են հավասար պարտականություններ իրենց երեխաների նկատմամբ (ծնողական իրավունքներ):

2. Սույն գլխով նախատեսված ծնողական իրավունքները դադարում են երեխաների տասնութ տարեկանը լրանալով, օրենքով նախատեսված կարգով մինչև չափահաս դառնալը երեխաների կողմից լրիվ գործունակություն ձեռք բերելու դեպքերում:

**Deleted:** ինչպես նաև սահմանված կարգով երեխաների ամուսնանալու,

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

**1. Ընթացիկ իրավիճակը եւ իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը**

«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերը մշակվել է ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ռուստամ Բաքոյանի կողմից՝ շահագրգիռ մարմինների հետ մի շարք աշխատանքային քննարկումների, խորհրդարանական լսումների իրականացման արդյունքում:

Ամուսնությունն ընտանիք կազմելու նպատակով տղամարդու ու կնոջ կամավոր միություն է: Կինն իր կամքի ազատ արտահայտությամբ պետք է ընտրի ամուսին և կազմի ընտանիք, ընդ որում, սույն հարցում արգելվում է սոցիալական, ռասայական, ազգային, լեզվական կամ կրոնական պատկանելության հատկանիշներով իրավունքների որևէ սահմանափակում: Ամուսնանալիս ամուսնացողներից յուրաքանչյուրը պետք է դրսևորի գիտակցված ու մտածված ցանկություն, համաձայնությունը պետք է տրված լինի ազատ և անկախ՝ առանց սպառնալիքի, բռնության կամ հարկադրանքի ազդեցության: Շատ կարևոր է, որ անձը գիտակցի ընտանիք կազմելու պատասխանատվությունը և դրա հետևանքները: Առերևույթ գիտակցված կարող է համարվել նաև 16 տարեկանների ամուսնությունը, առավել ևս, որ ըստ էության գործող կարգավորումները լրիվ գործունակության, քրեական պատասխանատվության տարիքային շեմի առումով ունեն վերաբերելի դրույթներ: Սակայն ակներև է, որ ամուսնության շուրջ առաջացող իրավահարաբերությունների բնույթն ու կարևորությունը, անձի՝ իր կամքի ազատ արտահայտությամբ ամուսին ընտրելու, ամուսնանալու իրավունքը չի կարող և չպետք է խոչընդոտի անձի մի շարք այլ իրավունքների իրացմանը (կրթության իրավունք, առողջության պահպանման և այլ հիմնարար իրավունքներ):

ՀՀ գործող օրենսդրության համաձայն ամուսնության տարիքը 18 տարեկանն է: Անձը կարող է ամուսնանալ նաև 17 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը: Անձը կարող է ամուսնանալ նաև 16 տարեկանում, եթե առկա է նրա ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությունը, և ամուսնացող մյուս անձը առնվազն 18 տարեկան է:

Երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր ոք, բացառությամբ այն դեպքերի, երբ նա օրենքով սահմանված կարգով գործունակություն է ձեռք բերում կամ գործունակ է ճանաչվում ավելի վաղ:

Երեխաների իրավունքների պաշտպանությանը վերաբերող բոլոր օրենքների հիմքում որպես այդպիսին երեխայի լավագույն շահն է, իսկ երեխայի իրավունքներից ամենակարևորները նրա առողջության, կրթության, սոցիալական իրավունքներն են: Պետության պարտականությունն է բոլոր դեպքերում ապահովել երեխայի լավագույն շահը և ստեղծել պայմաններ, որ երեխան մեծանա առողջ, կիրթ և բարեկեցիկ:

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի՝ «Բռնի ամուսնությունների և երեխաների ամուսնությունների մասին» 2005 թվականի թիվ 1468 բանաձևի 3-6-րդ կետերում նշված է. «Վրդովմունք է առաջացնում այն փաստը, որ առկա են իշխանություններ, որոնք գաղթական համայնքների մշակույթի և ավանդույթների նկատմամբ հարգանքի քողի լույսի ներքո հանդուրժողականություն են ցուցաբերում բռնի ամուսնությունների և երեխաների ամուսնությունների նկատմամբ՝ չնայած նրան, որ վերջիններս խախտում են յուրաքանչյուր զոհի հիմնարար իրավունքները: Վեհաժողովը բռնի ամուսնությունը սահմանում է որպես երկու անձանց միություն, որոնցից առնվազն մեկը չի տվել ամուսնանալու՝ իր լիարժեք և ազատ համաձայնությունը: Հաշվի առնելով այն, որ բռնի ամուսնությունը խախտում է անհատի հիմնարար իրավունքները՝ այն որևէ կերպ չի կարող արդարացված համարվել: Վեհաժողովը ընդգծում է ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի՝ 1954 թվականի դեկտեմբերի 17-ի 843 (IX) բանաձևի կարևորությունը, որով հայտարարվել է, որ որոշ սովորույթները, ամուսնությանն ու ընտանիքին վերաբերող հնացած օրենքները և պրակտիկան անհամատեղելի են ՄԱԿ-ի կանոնադրությունում և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում ամրագրված սկզբունքներին:

ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված 73/153 բանաձևի համաձայն՝

Գլխավոր Ասամբլեան ի թիվս այլնի խստորեն կոչ է անում պետություններին ընդունել, կիրառել և պահպանել օրենքներ ու ռազմավարություններ, որոնք ուղղված են երեխաների, վաղ և հարկադիր ամուսնությունների կանխարգելմանը և վերացմանը, ռիսկի խմբում գտնվող անձանց պաշտպանությանը և այս խնդրով տուժած անձանց կարիքների բավարարմանը և գործել այդ օրենքների և ռազմավարությունների տեղական համաձայնեցման ուղղությամբ՝ ապահովելով, որ ամուսնությունները տեղի ունենան միայն ապագա ամուսինների գիտակցված, ազատ և ամբողջական համաձայնության հիման վրա: Գլխավոր Ասամբլեան նաև կոչ է անում պետություններին ընդունել, կիրառել և պահպանել ամուսնության նվազագույն տարիքի մասին օրենքները, վերահսկել դրանց իրականացումը և համակարգված փոփոխություններ կատարել օրենքներում՝ ամուսնության նվազագույն տարիքը և/կամ չափահասության տարիքը մինչև 18 տարեկանը բարձրացնելու համար և ներգրավել բոլոր համապատասխան իշխանության մարմիններին՝ այդ օրենքների լայն ճանաչում ունենալը ապահովելու համար:

Անչափահաս երեխայի ամուսնությունը երեխայի իրավունքների խախտում է և արգելված է միջազգային իրավունքով: Այն զրկում է հատկապես աղջիկներին իրացնելու առողջության, կրթության և բնականոն զարգացման իրենց հիմնարար և հավասար իրավունքները:

Մանկական ամուսնությունը, ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի սահմանման, պաշտոնապես կնքված ամուսնությունն է կամ ոչ պաշտոնական միությունը 18 տարին չլրացած անձի հետ: Որոշ երկրներում օրենքով սահմանված ամուսնության նվազագույն տարիքը 18 տարեկանից ցածր է, մյուսներում՝ թույլ է տրվում մինչև 18 տարեկանն ամուսնանալ ծնողների համաձայնությամբ՝ հղիությամբ կամ այլ հատուկ հանգամանքներով պայմանավորված, երրորդում՝ մշակութային ավանդույթները կարող են ավելի զորեղ լինել, քան պաշտոնական իրավական նորմերը:

Վաղամուսնություններ կնքելու պատճառները տարբեր են՝ սոցիալ-տնտեսական ծանր վիճակ, տեղական մշակութային ավանդույթներ, վաղ ամուսնություններ թույլատրող օրենքներ, կրոնական և սոցիալական ճնշում, կրոնական կանոններ, ինչպես նաև կրթական ցածր ցենզ:

ԱՄՆ-ում չափահասության տարիքը համարվում է 21 տարեկանը, իսկ ամուսնության նվազագույն տարիքը սահմանվում է ամեն նահանգի կամ համայնքի կողմից՝ հաշվի առնելով իրավական, սոցիալական և կրոնական նորմերը: Որպես այդպիսին, ոլորտը կարգավորող դաշնային օրենք չկա, սակայն, ընդհանուր առմամբ, ԱՄՆ-ում քաղաքացին կարող է առանց

ծնողի, հոգաբարձուի կամ խնամակալի թույլտվության ամուսնանալ 18 տարեկանից սկսած (բացառությամբ Նեբրասկայի և Միսիսիպիից, որտեղ նվազագույն թույլատրելի տարիքը համապատասխանաբար 19 և 21 տարեկան է):

Սինգապուրում նվազագույն ամուսնության տարիքը 21 տարեկանն է և՛ տղամարդկանց, և՛ կանանց համար: Առանց ծնողների համաձայնության ամուսնանալու համար անհատները պետք է լինեն առնվազն 21 տարեկան:

Այնուամենայնիվ, 18-ից 21 տարեկան անձինք կարող են ամուսնանալ նաև ծնողների համաձայնությամբ: Սակայն եթե անհատը 18 տարեկանից ցածր է, ամուսնության համար պահանջվում է իշխանությունների կողմից հատուկ հաստատում, և դա սովորաբար չի տրվում, բացառությամբ բացառիկ դեպքերի:

Ըստ ՀՀ ԱԺ փորձագիտական և վերլուծական վարչության օրենսդրական մոնիտորինգի և տեղեկատվական բաժնի տվյալների՝ նրանց կողմից ուսումնասիրված երկրների ցանկում առանց բացառությունների ամուսնության օրինական նվազագույն տարիքային շեմը 18 տարեկան սահմանված է միայն Դանիայի Թագավորության և Շվեդիայի Թագավորության օրենսդրությամբ:

Վաղամուսնությունները խոչընդոտում են երեխայի մի շարք հիմնարար իրավունքների, առաջին հերթին պարտադիր կրթության իրավունքի իրացմանը: Հայաստանի Հանրապետությունում 12-ամյա կրթությունը պարտադիր է: ՀՀ ԿԳՄՍ նախարարության ներկայացրած տվյալների համաձայն՝ 2023-2024 թթ. ուսումնական տարվա ընթացքում հանրակրթական դպրոցներում սովորող 1319 ազգությամբ եզդի աղջիկներից միայն 2023 թ. ընթացքում 171 –ը դուրս է եկել կրթական համակարգից: Երեխաների՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու շարժն առավել ակնհայտ է ավագ դպրոցում. մասնավորապես 10-րդ դասարանում նախորդ տարիների համեմատ նկատվում է սովորողների 52,7% չափով նվազում, 11-րդ դասարանում՝ 69,5%, 12-րդ դասարանում՝ 88,2%: Խնդիրը համատարած բնույթ է կրում, անչափահասների ամուսնութունն առկա է ոչ միայն ազգային փոքրամասնությունների, այլ նաև ազգությամբ հայերի շրջանում:

2022 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 30 անչափահասի ամուսնության ակտային գրանցում, իսկ 2023 թվականի ընթացքում՝ 27:

Վաղամուսնությունը կարող է երկարաժամկետ բացասական հետևանքներ ունենալ՝ ներառյալ սոցիալական մեկուսացումը, ընտանեկան բռնությունը և ծննդաբերության հետ

կապված բարդությունները՝ պայմանավորված անչափահաս կնոջ թերզարգացած օրգանիզմով: Պատանի առաջնածին կինը մանկաբարձական տեսանկյունից գտնվում է ռիսկի խմբում:

Վաղ հղիությունը և ծննդաբերությունն ավելի բարդացած ընթացք են ունենում, դրանք էնդոկրին, ոսկրային, մկանային և օրգանիզմի ադապտացման համակարգերի ոչ բավարար զարգացման, օրգանիզմի ֆիզիոլոգիական իմաստով հղիության անպատրաստվածության արդյունք են: Վաղ սեռական կյանքը և վաղ հղիությունները, ոչ բավարար գիտելիքները սեռական կյանքի և սեռավարակների վերաբերյալ բացասական հետևանքներ են ունենում կնոջ հետագա գինեկոլոգիական և վերարտադրողական առողջության վրա: Առողջապահական տեսանկյունից կարևոր է գնահատել վաղ ծննդաբերությունների բացասական ազդեցությունները նաև մանկան վրա՝ նրա ճիշտ և լիարժեք խնամքն ապահովելու նպատակով՝ հաշվի առնելով երեխայի լավագույն շահը: Հետազոտությունները փաստում են, որ մանկական մահացությունների ցուցանիշներն ավելի բարձր են կրթական ցածր ցենզ ունեցող մայրերի մոտ: Դեռահասը, զրկվելով պարտադիր կրթության իրավունքից, միաժամանակ վտանգում է ոչ միայն իր, այլ նաև իր երեխայի առողջությունը:

Հարկ է նաև նշել, որ ըստ ՀՀ ԱԺ փորձագիտական և վերլուծական վարչության օրենսդրական մոնիտորինգի և տեղեկատվական բաժնի կողմից տրված տեղեկատվության՝ մինչև 18 տարին լրացած և ամուսնացած մայրերի ծնունդների թիվը ըստ տարիների ունի հետևյալ պատկերը՝

2018թ. 18

2019թ. 19

2020թ. 13

2021թ. 24

2022թ. 18

2023թ. 22

2018 թվականից 2022 թվականն ընկած ժամանակահատվածում մայրանալու միջին տարիքը 27.3-ից դարձել է 28.7:

Վաղամանությունները բացասաբար են անդրադառնում անչափահաս կանանց վրա նաև սոցիալական տեսանկյունից. խախտվում են նրանց սոցիալական պաշտպանության, պատշաճ կենսամակարդակի, կացարանի և սննդի, առողջության պահպանման,

սոցիալական ապահովություն հետապնդող իրավունքները: Առաջանում են ֆիզիկական, հոգեբանական բազմաթիվ խնդիրներ, սոցիալական խնդիրներ՝ սկսած ռիսկային սոցիալական վարքագծից, սոցիալական, առողջապահական ծառայությունների հասանելիության բացակայությունից, սոցիալական մեկուսացումից:

Վերջին տասնամյակում պետական և միջազգային կազմակերպությունների կողմից արված ուսումնասիրություններն արձանագրել են, որ երեխաների իրավունքների խախտումներից ամենագլխավորը վաղամուսնությունն է, ինչը կարող է նույնիսկ կործանարար հետևանքներ ունենալ 2 սեռերի համար:

Ամփոփելով հարկ է նկատել, որ օրենսդրի այն տրամաբանությունը, ըստ որի ՀՀ ընտանեկան օրենսգրքում սահմանվել են ամուսնության տարիքային շեմի առումով բացառություններ՝ վերոնշյալ հիմնավորմամբ պայմանավորված չի կարող արդարացված համարվել:

**2. Առաջարկվող կարգավորման բնույթը եւ նպատակը**

«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Ամուսնության կնքման համար անհրաժեշտ են ամուսնացող տղամարդու և կնոջ փոխադարձ կամավոր համաձայնությունը և նրանց ամուսնական՝ տասնութ տարեկան տարիքի հասնելը:

Բացի այդ, առաջարկվում է ընտանեկան օրենսգրքի 21-րդ հոդվածի «ա» կետը ուժը կորցրած ճանաչել: Ընտանեկան օրենսգրքի 22-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «, կամ եթե դա են պահանջում անչափահաս ամուսնու շահերը, ինչպես նաև ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին անչափահաս ամուսնու համաձայնության բացակայության դեպքում» բառերը: Ընտանեկան օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «ինչպես նաև սահմանված կարգով երեխաների ամուսնանալու,» բառերը:

Հաջորդիվ առաջարկվում է՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը ուժը կորցրած ճանաչել: Քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածի 4-րդ մասի «և 3-րդ կետերին» բառերը փոխարինել «կետին» բառերով:

Քաղաքացիական օրենսգրքի 42-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Անչափահասի նկատմամբ հոգաբարձությունն առանց հատուկ որոշման դադարում է նրա տասնութ տարին լրանալիս, ինչպես նաև սույն օրենսգրքի 24-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում:»:

Առաջարկվող իմպերատիվ կարգավորման նպատակը վաղամուսնությունների բացառումն է, ինչը բնականաբար միայն սույն իրավական ակտերի ընդունմամբ չի կարող իրագործվել և պահանջելու է հետևողական աշխատանք նաև իրավակիրառ մարմինների կողմից: Այնուամենայնիվ օրենքով սահմանելով ավելի բարձր տարիքային շեմ՝ էականորեն սահմանափակվում են երեխաների օրինական կերպով ամուսնանալու հնարավորությունները:

**3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք**

Նախագծերը մշակվել են ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ ԱԺ եզդի ազգային փոքրամասնության ներկայացուցիչ Ռուստամ Բաքոյանի կողմից՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ՀՀ արդարադատության նախարարության, Մարդու իրավունքների պաշտպանի, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի և այլ մարմինների հետ համագործակցության արդյունքում:

**4. Իրավական ակտի կիրառման արդյունքում ակնկալվող արդյունքը**

ՀՀ Սահմանադրության 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: Ամուսնության տարիքը, ամուսնության և ամուսնալուծության կարգը սահմանվում են օրենքով:

Ամուսնության տարիքային շեմի բարձրացման արդյունքում առավել խիստ մոտեցմամբ պայմանավորված որպես այդպիսին հնարավոր կլինի բացառել վաղամուսնությունները:

Ներկայացվող փոփոխությունները հնարավորություն կտան Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին առավել արդյունավետ կերպով իրականացնել երեխաների կրթական, առողջապահական պետական վերաբերելի քաղաքականությունը,

իսկ վերջնարդյունքում հնարավոր կլինի առավել արդյունավետորեն ապահովել հասուն, գիտակից և առողջ քաղաքացու սահմանադրորեն հռչակված ամուսնանալու ազատությունը: